

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ



Հինգշաբթի, 15 Ապրիլ. Իսրայելի Անկախութեան 73-րդ տարեդարձին առիթով, Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեան հանդիպեցաւ Իսրայելի նախագահ՝ Տիար Ռուվէն Ռիվլինի հետ, ապա ներկայ գտնուեցաւ նախագահական պալատին մէջ նախագահին կողմէ տրուած հիւրասիրութեան:

Ուրբաթ, 14 Մայիս. Իսրայելի մէջ եթովպիոյ դեսպան՝ Տիար Ռեթա Ալեմու Նեկան այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ: Հանդիպման ընթացքին քննարկուեցան սրբատեղեաց վերաբերող հարցեր:

Հինգշաբթի, 3 Յունիս. Հրեայ հոգեւորական Ռաբբի Դաւիթ Ռոզէն եւ Թագ Մէիր կազմակերպութեան ղեկավարներէն Իսկա Հարանին եւ Գադի Գաւրիհունի այցելեցին Պատրիարքարան եւ հանդիպում ունեցան Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի հետ: Հանդիպման ընթացքին հիւրեր ներողութիւն խնդրեցին վերջերս հայ հոգեւորականներու վրայ հրեայ ծայրայեղական երիտասարդներու յարձակման համար եւ համատեղ քննարկուեցաւ նմանօրինակ դէպքերու յառաջն առնելու համար հնարաւոր միջոցներ ձեռնարկելու հարցը:

Նոյն օրը Պաղեստինի նախագահին կից «Եկեղեցիներու գործերու բարձրագոյն յանձնախումբի» անդամներ այցելեցին Պատրիարքարան եւ հանդիպում ունեցան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ: Հանդիպման ընթացքին անոնք

հրեայ ծայրայեղական երիտասարդներու յարձակումը եւ իրենց աջակցութիւնն ու համերաշխութիւնը յայտնեցին Սուրբ Աթոռոյս Գահակալին եւ Սուրբ Երկրի հայ համայնքին:

Չորեքշաբթի, 16 Յունիս. Ռամալլայի մէջ գրտնուող Հոլանտայի ներկայացուցչութեան դեսպան Տիար Kees van Baar այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Հինգշաբթի, 24 Յունիս. Առաւօտեան ժամը 10-ին, Երուսաղէմի Ասորի-Կաթոլիկ եկեղեցւոյ նոր առաջնորդ՝ Գերշ. Տ. Եփրեմ Եպս. Սեմա՛ան այցելեց պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի հետ:

Երկուշաբթի, 5 Յուլիս. Ասորի-Կաթոլիկ եկեղեցւոյ Պատրիարք՝ Ամեն. Մոր Իգնատիոս Յուսէֆ III Եփրեմ Յունան իր եկեղեցականներով այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Սեւան Արք. Ղարիպեանի եւ Միաբանութեան հետ: Հանդիպման ընթացքին Սրբազան Հայրը Սուրբ Աթոռոյս կողմէ Նորին Ամենապատիւութեան նուիրեց լանջախաչ մը, իսկ ան իր կարգին Պատրիարքարանիս նուիրեց վերջին ընթրեաց պատկեր մը:

Երկուշաբթի, 12 Յուլիս. Երեկոյեան ժամը 4-ին, Պաղեստինի մէջ Պրազիլիոյ դեսպան Տիար Ալեսանդրո Գանտիաս այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի հետ:

Պատրաստեց՝ Տ. ՆԵՐՍԵՍ ԱՔԳ. ԱԼՈՅԵԱՆ